ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱԳԱՐԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
С. БАГАРАН

գ. Բագարան
23.10.2019թ.

с. Багаран

№ 77

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

ՀՀ Արմավիրի մարզի Բագարանի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու 25 սեպտեմբերի 2019 թվականին կայացած թիվ 7 նիստի ճշտված որոշումները:

Առդիր 4 թերթ

*Բագարան համայնքի ղեկավար* *Գ. Մարգարյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-18870-2019
25 10 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

թիվ 7 նիստ

«25» սեպտեմբերի 2019թ. — թիվ 17 որոշում

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով

Բագարան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարան համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Բարսեղյան | [signature] | | |
| Ի. Գալոյան | [signature] | | |
| Վ. Դանիելյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար — Գ. Մարգարյան

2019 թվականի սեպտեմբերի 25
գ. Բագարան

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25 –Ի ԹԻՎ 7
ՆԻՍՏԻ N 17 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

1.Ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 7 նիստի օրակարգի հաստատում:
/զեկուցող Գ. Մարգարյան/

2.համայնքի վարչական տարածքում Ախուրյան գետի առափնյա տարածքի սանիտարական մաքրման մասին:
/զեկուցող Գ. Մարգարյան/

3. ՀՀ Արմավիրի մարզի Բագարանի համայնքապետարանի տարածքում առկա ազդարարման համակարգի սարքավորումները և դրանց լրակազմը համայնքի հաշվեկշռում հաշվառելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2019թ

թիվ 7 նիստ
թիվ 18 որոշում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԽՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով

Բագարան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին Ախուրյան գետի առափնյա տարածքում կատարել չոր վառելափայտի սանիտարական մաքրման աշխատանքներ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Բարսեղյան | | | |
| Ի. Գալոյան | | | |
| Վ. Դանիելյան | | | |

Համայնքի ղեկավար Գ. Մարգարյան

2019 թվականի սեպտեմբերի 25
գ. Բագարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«25» սեպտեմբերի 2019թ

թիվ 7 նիստ
թիվ 19 որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱԿԱԶՄԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 346-Ն որոշման հավելվածի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները
Բագարան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարանի համայնքապետարանի տարածքում առկա Ս-40 մակնիշի կառավարման վահանակը՝ որպես գույքային արժեք, հաշվառել համայնքի հաշվեկշռում:
2. Սահմանել, որ վերը նշված ազդարարման համակարգի սարքավորումների պահպանման և սպասարկման համար պատասխանատու են հանդիսանում՝
   ա) համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը,
   բ) համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման խումբը:
3. Սույն որոշումը հայտարարել բստ առնչության:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարան համայնքի ղեկավարին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Բարսեղյան | [signature] | | |
| Ի. Գալոյան | [signature] | | |
| Վ. Դանիելյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար

Գ. Մարգարյան
2019 թվականի սեպտեմբերի 25
գ. Բագարան